ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ «ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

Մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Լ. Բաղդասարյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _10_

«_27_» _նոյեմբեր_ 2023_ թ

# ՄՀ/բ – 128 Հոգեբանություն

Դասիչ, դասընթացի անվանում

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** Մանկավարժության և հոգեբանության
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** Հեռակա
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ ՝** հեռակա 3-րդ կուրս, 1-ին կիս.

**Դասախոս՝** **Ստեփանյան Անահիտ**
/անուն, ազգանուն/

Էլ.հասցե/ներ՝ petrosyan.anahit@gmail.com

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ………….. . . . . . . . . . 4
2. Դասընթացի նպատակը և խնդիրները …………………….. . . . . . . 4
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ……………………….. . . . 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները …………………….5
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների …………………….. . . . . . . . . . 5
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ……………………….. . . . . . . 6
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ………………….. . . . 6
8. Դասավանդման մեթոդներ……………………………….. . . . .7
9. Ուսումնառության մեթոդները ……………………….. . . . . . . . . . 7
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ……………………………………….. . . . . . . . . .8
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ…………9
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ……………………..10
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . 10
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ……………………………15
    12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ….19
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում…………24
14. Գնահատում……………………………………….. . . . . .25
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում……………………25
15. Դասընթացի համառոտ նկարագիրչ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.

031301.01.6«Հոգեբանություն» դասընթացը կարևորվում է մանկավարժության Բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 011401.09.6 , Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

## 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

Դասընթացի նպատակներն են.

- ուսանողներին գիտելիքներ և պատկերացում տալ հոգեկանի, նրա գործառնության և զարգացման փաստերի, օրինաչափությունների և մեխանիզմների, հոգեբանական հետազոտության մեթոդների մասին:
-Ապագա մասնագետներին ցույց տալ հոգեբանական ասպեկտի կարևորությունն ու բովանդակությունը մասնագիտական գործունեության մեջ:
-ապագա մասնագետներին տալ գիտելիքներ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու համար:

**2.1.** Դասընթացի խնդիրներն են.

- ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել հոգեբանության՝ որպես գիտության մասին, ընդհանուր հոգեբանության ընդհանուր տեսական հիմնախնդիրների մասին,
- ապահովել ուսանողների կողմից ընդհանուր հոգեբանության մեթոդաբանական սկզբունքների, հետազոտության փուլերի և մեթոդների մասին գիտելքիների յուրացումը,
- Գիտելիքներ տալ հոգեկան գործընթացների, հոգեկան հատկությունների և հոգեկան վիճակների մասին:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները «Հոգեբանություն»** դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը «Փիլիսոփայություն», «Կենսաբանություն», «Ֆիզիոլոգիա» դասընթացներից:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և /կամ կոմպետենցիաները.

**«Հոգեբանություն»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

**Գիտելքներ**

1. Հոգեբանության՝ որպես գիտության առաջացման նախադրյալները, զարգացման փուլերն ու ուսումնասիրության առարկան:
2. Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը:
3. Հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, նրանց տեսակներն ու ֆիզիոլոգիական հիմքերը:
4. Հոգեկան վիճակների և նրաց կարգավորման առանձնահատկությունները:
5. Հոգեկան հատկություններն ու նրանց տեսակները:

**Կարողություններ**

1. Վերլուծել և մեկնաբանել ընդհանուր հոգեբանության հիմնական հասկացությունների համակարգը:

2. Տարանջատել հոգեկան երևույթները սոցիալական միջավայրում՝ առօրյա կյանքի համատեքստում և կարողանա վերլուծել սեփական հոգեկան գործընթացներն ու հատկությունները,

3. Հենքային գիտա-տեսական գիտելիքները ընդհանուր հոգեբանության ոլորտում կիրառելու կարողություն:

**Հմտություններ**

1. Ընդհանուր և հատուկ հոգեբանության հասկացությունների վերլուծության և սահմանման հմտություններ,

2. Հոգեբանական հետազոտությունների մեթոդներ,

3. Հոգեբանական հետազոտությունների մեթոդների կիրառման հմտություններ՝ ինքնաճանաչման և ինքնազարգացման ուղղության նախանշման նպատակներով:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

**ԳԿ2 տեղեկատվական աղբյուրներից օգտվելու ,** պլանավորելու և կառավարելու ունակություն

**ԳԿ3 ձգտել զարգացնելու ինտելեկտուալ , կոմունիկատիվ և կազմակերպչական հմտությունները (**մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ),

Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)՝

**ՄՁԿ3** միջանձնային ունակություններ,

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

**ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն

Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

**ԱԿ1** Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը

**ԱԿ3** Նկարագրել հոգեկանի երևույթները, օրենքները, օրինաչափությունները և մեխանիզմները

**ԱԿ11** տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

**ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

**«Հոգեբանություն»** դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կատարել մարդու ֆիզիկական, մտավոր և ֆունկցիոնալ հնարավորությունների ուսումնասիրություն և կատարելագործում, կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում և սոցիալական հոգեբանության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

### *6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | | 4 կրեդիտ/120 ժամ |

| Աշխատանքի տեսակր | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | | 8 |
| Գործնական աշխատանք | | 8 |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | | 104 |
| **Ընդամենը** | | 120 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | | Քննություն |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>.
   - **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի

առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել

գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական

  պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և

  ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

  - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - <u>Գործարար խաղեր</u> – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
  - <u>Կլոր սեղան</u> – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - <u>Կոնկրետ իրավիճակների վերլուծություն</u> – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:

8. **Դասավանդման մեթոդներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր, վավերագրական ֆիլմերի դիտում:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, գիտական աղբյուրների իքնուրույն վերլուծություն:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Ընդհանուր հոգեբանության ներածություն: Հոգեբանության առարկան, նրա խնդիրները և մեթոդները: Հոգեբանությունը ժամանակակից գիտությունների համակարգում: Հասկացություն հոգեկանի մասին և նրա զարգացումը: Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը: Գործունեության հոգեբանական տեսություն: Անգիտակցական հոգեկան գործընթացներ: | 4 | | 2 | | |
| 2. | Հոգեկան գործընթացներ: Զգայություններ: Ըմբռնում: Հիշողություն: Ուշադրություն: Երևակայություն: Մտածողություն: Խոսք: Կամք: Հույզեր և զգացմունքներ: | 2 | | 4 | | |
| 3. | Հոգեկան վիճակները և նրանց կարգավորումը: Հուզական սթրես և հուզական վիճակների կարգավորում: Անձի հոգեկան հատկություններ: | 2 | | 2 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 8 | | 8 | | |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Նալչաջյան Ա. Ա. , Ընդհանուր հոգեբանության հիմքունքներ, Գիրք , Երևան, Լույս 1991, 512 էջ | |
| 2. | Նալչաջյան Ա. Ա. , Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան», Երևան 1997, 648 էջ | |
| 3.<br>4 | Պետրովսկի Ա. Վ. , Ընդհանուր հոգեբանություն, Երևան, «Լույս» 1974, 543 էջ<br>Маклаков А.Г., Общая психология: Учебник для вузож,- СПб., Питер, 2021. -583с. | |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Абрамова, Г.С. Общая психология: Учебное пособие / Г.С. Абрамова. - М.: Инфра-М, 2011. - 320 с. | |
| 2. | Глуханюк, Н.С. Общая психология / Н.С. Глуханюк. - М.: Academia, 2016. - 608 с. | |
| 3. | Еникеев, М.И. Общая психология: Учебник для ВУЗов / М.И. Еникеев. - М.: Приор, 2002. - 400 с. | |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | https://www.koob.ru/ | |
| 2. | https://psyjournals.ru/ | |
| 3. | https://www.elibrary.ru/defaultx.asp? | |
| 4. | https://cyberleninka.ru/ | |

## 11.Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| h/h | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն |
|---|---|---|---|---|
| 1. | **Ընդհանուր հոգեբանության ներածություն** | Հոգեբանության առարկան, նրա խնդիրները և մեթոդները: Հոգեբանությունը ժամանակակից գիտությունների համակարգում: Հասկացություն հոգեկանի մասին և նրա զարգացումը: Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը: Գործունեության հոգեբանական տեսություն: Անգիտակցական հոգեկան գործընթացներ: | 4 | |
| 2. | Հոգեկան գործընթացներ: | Զգայություններ: Ըմբռնում: Հիշողություն: | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ուշադրություն: Երևակայություն: Մտածողություն Խոսք:: Կամք: Հույզեր և զգացմունքներ: | | |
| 3. | Հոգեկան վիճակները և նրանց կարգավորումը: | Հուզական սթրես և հուզական վիճկաների կարգավորում: | 1 | |
| 4. | Անձի հատկությունները | Անձնավորություն: Խառնվածք Բնավորություն: Ընդունակություններ: | 1 | |

**11.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

| h/h | *Թեմա* | Ուսումնասիրվող Հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[1] |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Ընդհանուր հոգեբանության ներածություն** | Հոգեբանության առարկան, նրա խնդիրները և մեթոդները: Հոգեբանությունը ժամանակակից գիտությունների համակարգում: Հասկացություն հոգեկանի մասին և նրա զարգացումը: Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը: Գործունեության հոգեբանական տեսություն: Անգիտակցական հոգեկան գործընթացներ: | 2 | Բանավոր հարցում | |
| 2. | Հոգեկան գործընթացներ: | Զգայություններ: Ըմբռնում: Հիշողություն: Ուշադրություն: Երևակայություն: Մտածողություն: Խոսք: Կամք: Հույզեր և զգացմունքներ: | 2 | Բանավոր հարցում | |

[1] ստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Հոգեկան վիճակներն նրանց կարգավորումը: | Հուզական սթրես և հուզական վիճկաների կարգավորում: | 2 | Բանավոր հարցում | |
| 4 | Անձի հոգեկան հատկությունները | Անձնավորություն: Խառնվածք: Բնավորություն: Ընդունակություններ: | 2 | Բանավոր հարցում | |

## 11.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մարդու ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերը | | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսաասահիկ | |
| 2. | Ինտրոսպեկցիայի մեթոդը և ինքնադիտման խնդիրը | Սոցիալական հաղորդակցման բազմիմաստությունը: Սոցիալական հաղորդակցման տեսակները: Հաղորդակցման տեխնիկական միջոցները: Ոչ վերբալ հաղորդակցում: | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսաասահիկ | |
| 3. | Կենդանիների հոգեկանի զարգացումը | Ներգործության մեխանիզմները սոցիալական հաղորդակցման ժամանակ: Փոխըմբռնման մեխազնիզմները: | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսաասահիկ | |
| 4. | Մարդու հոգեկանի կուլտուր-պատմական հայեցակարգը | Ինքնաներկայացում: Ինքնաներկայացման գործառույթները: Ինքնաներկայացման ռազմավարություններն ու | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսաասահիկ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկաները: | | | | |
| 5. | Շարժումների և ակտիվության ֆիզիոլոգիան | «Իմիջ» և «բրեդ» հասկացությունները: Բրենդի գործառույթներն ու կառուցվածքը: Անհատական բրենդի մշակման տեխնոլոգիաները: Բրենդի հետազոտության հոգեբանական մեթոդները: Բրենդի ընկալման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները: | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսասահիկ | |
| 6. | Գիտակցված գործողությունների անգիտակից մղումները | Սոցիալական հաղորդակամցնա գենդերային ասպեկտները: Ինքնաբացահայտումը որպես սոցիալական հաղորդակցման ֆենոմեն: | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսասահիկ | |
| 7. | Զգայությունների հիմնական տեսակները | Արդյունավետ հաղորդակցում Փոխըմբռնում: Հաղորդակցային գործընթացի կառուցվածքը: Հաղորդակցային կողմնորոշումները սոցիալական շփումներում: Արդյունավետ հաղորդակցման տեխնիկական բաղադրիչները: | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսասահիկ | |
| 8. | Հիշողության անհատական առանձնահատկությունները և նրա զարգացումը | Շրջապատող միաջավայրի գործոնները: Հասարակական միջավայրի ֆերոմենները: Անհատական-անձնային գործոնները: Հարրասմենթը և սեքսիզմը՝ որպես հաղորդակցման | Ռեֆերատ | | Բանավոր ներկայացում, տեսասահիկ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դժվարություններ: Խոսքային պատնեշներ: | | | | |

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Լսարան պրոյեկտորի առկայությամբ |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | Անհատական համակարգիչ |
| Համակարգչային ծրագրեր | Microsoft Office |
| Այլ | |

**14. Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի

  արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[2]

**14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի

  գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգմանարդյունքներիամփոփումգնահատմաննշված

  բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր

**14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.**

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[2]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ՄՀ/բ-128 Հոգեբանություն | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 4 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 3-րդ տարի, 1-ին կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 16 | Դասախոսություն | 8 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 8 |
| | Ինքնուրույն | 104 | | |
| | Ընդամենը | 120 | | |
| Ստուգման ձևը | Քննություն | | | |
| Դասընթացի նպատակը | Դասընթացինպատակնէուսանողներինգիտելիքներն պատկերացում տալ հոգեկանի, նրա գործառնության և զարգացման փաստերի, օրինաչափությունների և մեխանիզմների, հոգեբանական հետազոտության մեթոդների մասին: | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | **Գիտելքներ**<br>1. Հոգեբանության՝ որպես գիտության առաջացման նախադրյալները, զարգացման փուլերն ու ուսումնասիրության առարկան:<br>2. Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը:<br>3. Հոգեկան գործընթացների առանձնահատկությունները, նրանց տեսակներն ու ֆիզիոլոգիական հիմքերը:<br>4. Հոգեկան վիճակների և նրաց կարգավորման առանձնահատկությունները:<br>5. Հոգեկան հատկություններն ու նրանց տեսակները:<br>**Կարողություններ**<br>1. Վերլուծել և մեկնաբանել ընդհանուր հոգեբանության | | | |
| | հիմնական հասկացությունների համակարգը: | | | |

| | |
|---|---|
| | 2. Տարանջատել հոգեկան երևույթները սոցիալական միջավայրում՝ առօրյա կյանքի համատեքստում և կարողանա վերլուծել սեփական հոգեկան գործընթացներն ու հատկությունները,<br>3. Հենքային գիտա-տեսական գիտելիքները ընդհանուր հոգեբանության ոլորտում կիրառելու կարողություն:<br>**Հմտություններ**<br>1. Ընդհանուր և հատուկ հոգեբանության հասկացությունների վերլուծության և սահմանման հմտություններ,<br>2. Հոգեբանական հետազոտությունների մեթոդներ,<br>3. Հոգեբանական հետազոտությունների մեթոդների կիրառման հմտություններ՝ ինքնաճանաչման և ինքնազարգացման ուղղության նախանշման նպատակներով: |
| **Դասընթացի բովանդակությունը** | Ընդհանուր հոգեբանության ներածություն: Հոգեբանությունը ժամանակակից գիտությունների համակարգում: Հասկացություն հոգեկանի մասին և նրա զարգացումը: Մարդու գիտակցության ծագումն ու զարգացումը: Գործունեության հոգեբանական տեսություն: Անգիտակցականհոգեկան գործընթացներ: Հոգեկան գործընթացներ: Զգայություններ: Ըմբռնում: Հիշողություն: Ուշադրություն: Երևակայություն: Մտածողություն: Խոսք: Կամք: Հույզեր և զգացմունքներ: Հոգեկան վիճակները և նրանց կարգավորումը: Հուզական սթրես և հուզական վիճակների կարգավորում: Անձի հոգեկան հատկություններ: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | ▪ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,<br>▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,<br>▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական |

| | |
|---|---|
| | առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,<br>▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր |
| Գրականություն | Նալչաջյան Ա. Ա. , Ընդհանուր հոգեբանության հիմքունքներ, Գիրք , Երևան, Լույս 1991, 512 էջ<br>Նալչաջյան Ա. Ա. , Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան», Երևան 1997, 648 էջ<br>Պետրովսկի Ա. Վ. , Ընդհանուր հոգեբանություն, Երևան, «Լույս» 1974, 543 էջ<br>Маклаков А.Г., Общая психология: Учебник для вузож,- СПб., Питер, 2021. -583с.<br>Абрамова, Г.С. Общая психология: Учебное пособие / Г.С. Абрамова. - М.: Инфра-М, 2011. - 320 с.<br>Глуханюк, Н.С. Общая психология / Н.С. Глуханюк. - М.: Academia, 2016. - 608 с.<br>Еникеев, М.И. Общая психология: Учебник для ВУЗов / М.И. Еникеев. - М.: Приор, 2002. - 400 с. |